ըին Դ սահաթ նստաք. Իզվիդայից մեծաւորն եկն առ մեզ» (թղ. 229բ)։ — Նոյ. 12. «Մեք զՅունաց պատրիարգի գլուխն յղեցաք կարդալ ընդ Կոմիտասին, եւ քիչ մի գրեր էր ի նորա թխթէն հայերէն» (անդ)։ — Դեկտ. 1. «Զբուց չատ էանց վասն Երուսաղէմի ընդ Սրապիոնին և Կոմիտասին և Երեմիային (Սահապայար)» (թղ. 230ա)։ — Դեկտ. 7. «Եղիայի փեսա էրէցն և Կոմիտաս եռեցն աղմուկ վասն պսակի» (անդ)։ — 1699 Փետր. 22. «Տէր Կոմիտասն տկարացեալ ի տիւլալթուն» (թղ. 232ա)։

Մինաս Ամդեցի, որ 1695 Ապրիլ 4ին մեկնած էր Երուսաղէմէն ու ցամաքային ուղևորութեամբ գացած էր Էջմիածին, 1698 Հոկտ. 24ին կը դառնայ Կ. Պոլիս։ Երուսաղէմէն իր բացակայութեան ատեն Կայծակ մականուանեալ Գալուստ վրդ. ձեռք կ'անցընէ Ս. Աթոռի առաջնորդութիւնը ու իր տեղ Պալաթցի Յակոբ վարդապետը փոխանորդ կը ղրկէ Երուսաղէմ։ Մինաս Ամդեցի Գալուստ վարդապետը ձգելու և իր իշխանութիւնը վերահաստատել տալու համար երկու անգամ (1698 Դեկտ. 23 և 1699 Յուլիս 12) կ'երթայ Ադրիանուպոլիս ու կը ներկայանայ մեծ եպարքոսի ատեանը։ Անգամ մըն ալ՝ 1699 Մարտ 4ին՝ Ադրիանուպոլիս երթալու համար ճամբայ կ'ելլէ Կ. Պոլսէն՝ իրեն ուղեկից առնելով նաև Տէր Կոմիտասը, ինչպէս կը գրէ. «Ելի Ստամպօլու՝ Կոմիտասն եւ աբեղան եւ երկու փոքրաւոր եւ Թումասն՝ եւ եկաք ի Փոքր Զէքմէճէն» (թղ. 232բ)։ Ճամբան կը շարունակէ ու հանդիպելով Մեծ Զէքմէճէ և Սիլիվրի՝ Մարտ 6ին կը հասնի Զօրլու։ Ամդեցի հոն իմանալով թէ Գալուստ վրդ. չի գտնուիր Ադրիանուպոլիս՝ չորրորդ օրը այն տեղէն ետ կը դառնայ Կ. Պոլիս։ Զօրլուէն Տէր Կոմիտասի ձեռամբ նամակ մը կը գրէ Յունաց պատրիարքին. «Զգիր պատրիարգին Յունաց հայերէն գրեց